ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 մայիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

57
(3266)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՐՑԱԿԻՑԸ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ն Է

Ինչպես վաղօրոք հայտնել էր ԿԸՀ-ն, այսօրվանից՝ մայիսի 8-ից, մեկնարկում է նախընտրական քարոզարշավը: Հունիսի 7-ին սպասվող համապետական ընտրություններին մասնակցող 19 քաղաքական ուժերը այսօրվանից շրջելու են տարբեր համայնքներում՝ ներկայացնելու իրենց նախընտրական ծրագրերը, հիմնական նպատակները, գաղափարներն ու ռազմավարական ուղին:

Բոլոր սոցիալական հարցումները ցույց են տալիս, որ այս պահին առաջատար են 4 ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը, «Հայաստան» դաշինքը եւ «Առաջարկ Հայաստանին» քաղաքական ուժը:

Ակնհայտ է նաեւ այն, որ հունիսի 7-ին ՀՀ-ում իշխանափոխության հասնելու ռեալ հնարավորությունն ունի միայն ազգային բարերար Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան»-ը, եւ բնական է, որ գործող իշխանությունը գիտակցում է այս վտանգը:

Այս ամենին զուգահեռ, Հակակոռուպցիոն կոմիտեն պարբերաբար ձայնագրություններ, գաղտնալսումներ է հրապարակում, ըստ որի՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամները զբաղվում են ընտրակաշառքով:

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները հայտնում են, որ օր օրի գնալով ավելի է թեժանալու իրավիճակը՝ հաշվի առնելով նաեւ քարոզարշավի մեկնարկելու հանգամանքը: Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ այս շրջանում օր օրի Հակակոռուպցիոն կոմիտեն նոր գաղտնալսումներ է հրապարակելու: Նման ակնարկ արել է նաեւ ՔՊ պատգամավորներից մեկը՝ լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ հայտնելով. «Նոր գաղտնալսումների ձայն կլսեք»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Մայիսի 8-ին Հայաստանում պաշտոնապես մեկնարկում է Ազգային Ժողովի 2026 թվականի ընտրությունների նախընտրական քարոզարշավը, որը կշարունակվի մինչեւ հունիսի 5-ը ներառյալ: ԿԸՀ-ի հաստատած ժամանակացույցով՝ քաղաքական ուժերը հենց այդ օրվանից ստանում են օրենքով սահմանված հավասար քարոզչական ռեժիմը՝ հանրային եթերաժամից մինչեւ հրապարակային հանդիպումների պաշտոնական մեկնարկ: Այս պահի դրությամբ քաղաքական ուժերի մեծ մասի կողմից մայիսի 8-ի մեկնարկային օրվա ամբողջական ծրագրերը դեռ հրապարակային չեն դարձել: Սակայն արդեն կան առաջին հստակ ազդակները, թե ինչպես է բացվելու քարոզարշավը: ՔՊ կուսակցությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ քարոզարշավը սկսելու է Սյունիքի մարզից: Մեր աղբյուրները փոխանցում են, որ ՔՊ ակտիվը երկու օր անցկացնելու է Սյունիքի մարզում, բոլոր վայրերում նախատեսել են լինել, շատ ակտիվ «լայվ» քարոզարշավ իրականացնել: Մենք տեղեկացանք, որ կրկին ավտոբուսներով են մարզ մեկնելու, եւ ողջ քարոզարշավի «բեռը» իր վրա վերցնելու է Նիկոլ Փաշինյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Երեկ հայրենի կառավարությունը մի ուշագրավ որոշում է կայացրել: Կառավարության նիստում քննարկվել եւ որոշվել է դադարեցնել Գրիգոր Արթուրի Հարությունյանին տրամադրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետումը: Կառավարության որոշման նախագծի հիմնավորման համաձայն՝ նախաձեռնությունը մշակվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի, կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշման 12-րդ կետի, ինչպես նաեւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի 2026 թվականի մարտի 13-ի հրամանի եւ ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի համապատասխան գրության հիման վրա: Հիշեցնենք, որ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի N 1293-Ա որոշմամբ Գրիգոր Արթուրի Հարությունյանին՝ ծնված 2006 թվականի փետրվարի 22-ին, տրամադրվել էր տարկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից մինչեւ ուսումնառության ավարտը՝ 2028 թվականի ամառային զորակոչը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եղբայր Գեւորգ Ներսիսյանն ու եղբորորդի Համբարձում Ներսիսյանը տնային կալանքից ազատ արձակվեցին: Նրանց հանդեպ սահմանվեց վարչական հսկողություն: Այս մասին հայտարարվեց դատական նիստի ժամանակ: «Շարունակական անազատության մեջ գտնվելու պայմաններում էականորեն նվազել է վերջիններիս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսեւորելու ռիսկերը, այդ պայմաններում դատարանը գտնում է, որ տնային կալանք խափանման միջոցն անհրաժեշտ է փոխել եւ կիրառել վարչական հսկողություն: Դատարանը որոշում է մեղադրյալներ Գեւորգ Ներսիսյանի ու Համբարձում Ներսիսյանի նկատմամբ կիրառված տնային կալանքը փոխել վարչական հսկողությամբ՝ պահպանելով մյուս խափանման միջոցները՝ կիրառված գրավն ու բացակայելու արգելքը»,- հայտարարեց դատավորը: Հիշեցնենք, որ Գեւորգ եւ Համբարձում Ներսիսյաններին մեղսագրվում է հանցանքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից՝ քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտել): Նրանք կալանավորվել էին Վաղարշապատում «Հանրապետություն» կուսակցության համայնքապետի թեկնածու Հարություն Մկրտչյանի հաղորդման հիման վրա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՆԱԼՈՒ Է ՏՈՒՆ»

Armlur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Արթուր Խաչատրյանի հետ:

- Պարոն Խաչատրյան, օրերս Երեւանում տեղի ունեցան երկու խոշոր գագաթնաժողովներ՝ Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը եւ «ԵՄ-Հայաստան» առաջին գագաթնաժողովը: Ի՞նչ դրական ազդեցություն կարող են ունենալ դրանք Հայաստանի եւ հայ ժողովրդի համար:

-Երեւի ճիշտ կլիներ այդ հարցը կազմակերպիչներին ուղղել: Հայաստանի եւ Եվրոպայի մերձեցումը Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր բոլոր իշխանությունների քաղաքականության մաս է եղել: 2015 թվականին ստորագրվել է Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, եւ հենց այդ փաստաթուղթն է կարգավորում Հայաստան-Եվրոպա հարաբերությունները: Մնացած հարցերով պետք է դիմել գործող իշխանություններին:

-Բայց Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ կարող է շահել Հայաստանը այս հարաբերություններից:

-Հայաստանը նախ պետք է հասկանա՝ ինքն ինչ է ուզում շահել: Ոչ թե, ինչպես այսօրվա իշխանությունների դեպքում է, աշխարհաքաղաքական բեւեռից բեւեռ նետվի:

-Ռուսաստանից բավական կոշտ արձագանքներ եղան: Բացի այդ, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարեց, որ մայիսի 9-ի շքերթին օդում երեւալու են ուկրաինական դրոշներ: Սա վտանգավոր հայտարարություն չէ՞ Հայաստանի համար:

-Ես աշխարհի ամենավերջին մարդը կլինեմ, որ Զելենսկու հայտարարություններին անդրադառնամ: Կարծում եմ՝ այն երկիրը, ում ուղղված է եղել այդ սպառնալիքը, ինքն իր գնահատականը կտա: Բայց ես կարծում եմ, որ ընդհանրապես Զելենսկուն չպետք է թույլ տային գալ Երեւան, ինչպես որ Կիեւում էին անում: Պետք է հիշել նաեւ Զելենսկու արձագանքը Արցախի հայաթափման եւ 44-օրյա պատերազմի հետեւանքների վերաբերյալ:

-Մինչեւ 2018 թվականը ինչպիսի՞ հարաբերությունների մեջ էր Հայաստանը եվրոպական երկրների, մասնավորապես՝ Ֆրանսիայի հետ: Եւ նաեւ՝ նախկինում Ֆրանսիայի նախագահները Հայաստան այցելելիս պարտադիր այցելում էին Մայր Աթոռ, մինչդեռ այս անգամ Էմանուել Մակրոնը չայցելեց:

-Հայաստանի հարաբերությունները եվրոպական երկրների հետ միշտ եղել են շատ դրական: Բազմաթիվ եվրոպացի ղեկավարներ՝ Ժակ Շիրակը, Նիկոլա Սարկոզին, Ֆրանսուա Օլանդը, պաշտոնական եւ պետական այցերով եղել են Հայաստանում: Ավելին՝ Արցախի հակամարտության կարգավորման լավագույն առաջարկներից մեկը, որը ներկայացվել էր կողմերին 2001 թվականի ապրիլին Քի Ուեսթում, մշակվել էր Փարիզում՝ Ժակ Շիրակի անմիջական մասնակցությամբ եւ նախաձեռնությամբ: Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունները միշտ եղել են բարձր մակարդակի վրա: Այսօրվա Փաշինյան-Մակրոն հարաբերությունները որեւէ բացառիկ բան չեն: Իրենք անապատում այգեստան չեն կառուցել:

-Առաջիկա համապետական ընտրություններում ի՞նչ պատկեր եք տեսնում: Իշխանությունները վստահեցնում են, որ ունենալու են 50+1 տոկոս աջակցություն, իսկ ընդդիմությանը մեղադրում են ընտրակաշառքի եւ մանիպուլյացիաների մեջ:

-Նիկոլ Փաշինյանը գնալու է տուն: «Պատերազմի եռագլուխ դեւը»՝ Ալիեւը, Փաշինյանն ու Էրդողանը, շարունակում են սպառնալ ժողովրդին: Փաշինյանն ասում է, թե եթե ինքը չընտրվի, մյուս երկուսը պատերազմ կբերեն մեր գլխին: Բայց արդյո՞ք ժողովուրդը պարտավոր է հավերժ հանդուրժել Փաշինյանին: Ո՛չ: Ժողովուրդը պետք է ազատ կամքով գնա ընտրության եւ Փաշինյանին ուղարկի տուն, որովհետեւ քանի դեռ Փաշինյանը կա, պատերազմի վտանգը շարունակվելու է:

-Այսինքն՝ եթե իշխանությունը սահմանադրական մեծամասնություն չձեւավորի, պատերազմ կլինի՞:

-Ես արդեն պատասխանեցի այդ հարցին:

-Իսկ խաղաղության գործընթացը ինչպե՞ս եք պատկերացնում: Ընդդիմությունը ինչպե՞ս է շարունակելու այդ գործընթացը:

-Այս պահին չկա որեւէ ստորագրված եւ ուժի մեջ մտած փաստաթուղթ: Կա միայն նախաստորագրված համաձայնագիր, որն իրավական ուժ չունի: Դրանով հասարակությանը մոլորեցնում են: Պատկերացրեք՝ այդ փաստաթուղթը ստորագրվում է, հետո ներկայացվում է Հայաստանի Սահմանադրական դատարան, եւ դատարանը այն հակասահմանադրական է ճանաչում: Այդ դեպքում ի՞նչ են անելու: Վերաբանակցելո՞ւ են:

-Փաշինյանն ասում է՝ եթե պետք լինի, Սահմանադրությունը կփոխի հանրաքվեով: Բայց եթե ժողովուրդը «ոչ» ասի՝ մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ, այդ դեպքում ի՞նչ է լինելու:

- Նույնիսկ ստորագրված փաստաթուղթը կարող է փոփոխության ենթարկվել: Իսկ այստեղ մենք խոսում ենք ընդամենը նախաստորագրված թղթի մասին: Երբ ասում են, թե այն փոփոխման ենթակա չէ, դա պարզապես սուտ է: Նրանք խաբում են ժողովրդին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Թուրքական մի շարք լրատվամիջոցներ ակտիվորեն կեղծ արշավ են սկսել եւ հրապարակումներ են տարածում Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Հայաստան կատարած այցի եւ Ծիծեռնակաբերդ հուշահամալիր այցելության վերաբերյալ՝ պնդելով, թե Մակրոնին թույլ չի տրվել օգտագործել Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը:

Թուրքական մամուլում շրջանառվող հրապարակումների համաձայն՝ Ֆրանսիայի նախագահը Հայաստան այցից հետո ցանկացել է Թուրքիա մուտք գործել հայ-թուրքական սահմանով, սակայն, ըստ թուրքական աղբյուրների, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մերժել է այդ դիմումը: Թուրքական լրատվամիջոցները դա ներկայացնում են որպես «Մակրոնի հակաթուրքական քաղաքականությանը տրված պատասխան»:

Հրապարակումներում նշվում է, թե Մակրոնը «վերջին շրջանում բացահայտ թշնամական դիրքորոշում է որդեգրել Թուրքիայի նկատմամբ», իսկ նրա այցը Ծիծեռնակաբերդ «ավելացրել է Անկարայի դժգոհությունը»: Թուրքական կողմը հատկապես քննադատում է այն, որ Ֆրանսիայի նախագահը այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր եւ իր գրառումներում անդրադարձել 1915 թվականի իրադարձություններին:

Թուրքական մամուլը նաեւ շեշտում է, որ Մակրոնը «թիրախավորել է Օսմանյան կայսրությունը»՝ խոսելով պատմական հիշողության եւ զոհերի չմոռացվելու մասին: Մի շարք հրապարակումներում կրկնվում է նաեւ թուրքական պաշտոնական թեզը, ըստ որի՝ Հայաստանը պետք է հրաժարվի «ցեղասպանության մասին անհիմն պնդումներից»:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Երեւանում մասնակցել էր Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին, հանդիպել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, ինչպես նաեւ այցելել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք էր մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻՑ

Հայաստանում մի շարք ընկերություններ են ազատվել ներմուծման մաքսատուրքերից: Համապատասխան որոշումներն ընդունվել են մայիսի 7-ին՝ Կառավարության նիստի ժամանակ: Մասնավորապես, մաքսատուրքից ազատվել է Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքում ճանապարհների շինարարությամբ եւ շահագործմամբ զբաղվող ընկերությունը: Վերջինս նախատեսում է ներկրել 160 մլն դրամ ընդհանուր արժողությամբ բեռնատարներ: Արտոնության չափը կկազմի 24 մլն դրամ:

Գյումրու «Բելիսիմո գրուպ» ընկերությունը, որը եւս ստացել է նմանատիպ արտոնություն, մտադիր է 1,7 մլրդ դրամի ներդրում կատարել մսամթերքի արտադրության համար անհրաժեշտ հումքի եւ սարքավորումների ձեռքբերման նպատակով: Այս դեպքում արտոնության չափը կկազմի 728,6 մլն դրամ:

Արմավիրի մարզի «Պրինտարմ Դանվեստ» ընկերությունը սույն որոշման շրջանակում նախատեսում է թողարկել 22 մլրդ դրամի արտադրանք: Արտոնության չափը կկազմի 1,1 մլրդ դրամ:

Հագուստի արտադրությամբ զբաղվող երեւանյան «ԷՖ-ՏԵԿՍ» ընկերությունը եւս ստացել է նմանատիպ արտոնություն եւ մտադիր է արտադրել 917 մլն դրամի արտադրանք: Այս դեպքում արտոնության չափը կգնահատվի 69 մլն դրամ:

Բացի այդ, տեխնոլոգիական սարքավորումների ներմուծման մաքսատուրքից ազատվել է նաեւ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գործող «Միմո Թրեյդ» ընկերությունը: Ընկերությունը զբաղվում է ջերմոցային տնտեսությամբ եւ վարդերի մշակմամբ: Հաշվի առնելով նոր մատակարարների հետ կնքված պայմանագրերը՝ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ներկրել 50,7 մլն դրամի լրացուցիչ ապրանքաքանակ: Մաքսատուրքից ազատման ընդհանուր գումարը գնահատվում է 25,7 մլն դրամ: Նախատեսվում է վարդերն իրացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում (մասնավորապես՝ Ռուսաստանում):

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Մայիսի 6-ին «Երեւանյան երկխոսություն» միջազգային համաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի հանդիպումը Կամբոջայի Թագավորության ԱԳ եւ միջազգային համագործակցության նախարարության պետքարտուղար Մեաս Կիմ Հենգի հետ:

Զրուցակիցները քննարկել են երկկողմ օրակարգի մի շարք հարցեր՝ իրենց պատրաստակամությունը հայտնելով խորացնել համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Քննարկել են նաեւ վերականգնվող եւ կանաչ էներգետիկայի զարգացման ուղղությամբ երկու երկրներում իրականացվող քաղաքականությունը:

ԱԳ նախարարի տեղակալը զրուցակցին ներկայացրել է Հարավային Կովկասում խաղաղության ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԿԻՑԸ ՉԷ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության ճեպազրույցի ժամանակ հայտարարել է, որ Հայաստանը Ուկրաինայի հարցում Ռուսաստանի դաշնակից չէ՝ անդրադառնալով Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու՝ Երեւան այցի վերաբերյալ հնչող քննադատություններին:

Վարչապետի խոսքով՝ Հայաստանը Ուկրաինային տրամադրել է հումանիտար օգնություն, եւ պաշտոնապես հստակեցրել է իր դիրքորոշումը: «Ուկրաինայի հարցով մենք դաշնակից չենք Ռուսաստանի հետ»,- ընդգծել է Փաշինյանը: Նա նաեւ նշել է, որ Հայաստանի արտաքին քաղաքականության եւ տարածաշրջանային խաղաղության գործընթացների համար առանցքային նշանակություն ունի Ալմա-Աթայի հռչակագիրը, որի վրա, ըստ նրա, կառուցվում է նաեւ Ադրբեջանի հետ խաղաղության օրակարգը:

«Դուք գիտեք, թե Ալմա-Աթայի հռչակագիրն ինչ կարեւոր եւ սկզբունքային նշանակություն ունի մեզ համար, եւ մենք հենվում ենք այդ հռչակագրի վրա ու այդ հիմքի վրա ենք կառուցում խաղաղությունը Ադրբեջանի հետ: Սա մեր սկզբունքային դիրքորոշումն է»,- ասել է վարչապետը:

Հիշեցնենք, որ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին Երեւան էր այցելել մայիսի 4-ին՝ մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովին:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել է, որ չի մասնակցելու Մոսկվայում կայանալիք մայիսի 9-ի ռազմական շքերթին՝ կապված երկրում սկսվող խորհրդարանական ընտրությունների նախընտրական գործընթացի հետ: Այս մասին նա հայտարարել է ճեպազրույցի ընթացքում:

Փաշինյանի խոսքով՝ դեռ ապրիլի 1-ին Մոսկվա կատարած այցի ժամանակ ինքը այդ մասին տեղեկացրել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին: Վարչապետը նշել է, որ Հայաստանում սկսվում է նախընտրական քարոզարշավը, ինչի պատճառով ինքը չի կարողանա մասնակցել մայիսի 9-ին նախատեսված միջոցառումներին, գրում է Լենտա.ռու-ն:

Հայաստանի կառավարության ղեկավարի հայտարարությունը հրապարակվել է Armenpress-ի ուղիղ հեռարձակման ընթացքում: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ մի շարք երկրների առաջնորդներ կմասնակցեն Մոսկվայում Հաղթանակի օրվան նվիրված միջոցառումներին:

ԿԱՐԵՎՈՐ ՉԷ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՔՎԻՑ

Ռուբեն Վարդանյանը հայտարարություն է փոխանցել ընտանիքի հետ հեռախոսազրույցի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի պատասխանի առնչությամբ:

«Ինձ հաջողվեց ծանոթանալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի՝ իմ դիմում-խնդրանքի պատասխանին: Հրապարակայնորեն չեմ գնահատի նրա այդ դիրքորոշումը: Թողնում եմ նրա խղճին: Պարզապես կասեմ՝ անկեղծորեն ցավում եմ: Աստված ձեզ դատավոր:

Բայց այս պատասխանից հետո կոնկրետ հարցեր են առաջանում ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի, այլեւ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ կապված:

Եթե Ադրբեջանի բանտերում գտնվող հայ քաղաքացիների պաշտպանությունը ՀՀ օմբուդսմենի մանդատի մեջ չի մտնում, ապա ո՞ւմ մանդատն է սա: Մեր երկրում ո՞վ է պատասխանատու այս հարցի համար: Ե՞րբ է նշանակվել այդ անձը: Ինչո՞ւ դրա մասին ոչ ոք չգիտի՝ ո՛չ բանտարկյալների ընտանիքները, ո՛չ հասարակությունը:

Կան մարդիկ, ովքեր Բաքվի բանտերում պահվում են արդեն վեց տարի: Այս ընթացքում Հայաստանի կառավարությունն այդպես էլ չկարողացավ նրանց հետ կայուն եւ հասկանալի կապի մեխանիզմ կազմակերպել՝ ո՛չ երրորդ կողմի՝ Բաքվում այլ պետությունների դեսպանատների, ո՛չ միջազգային կազմակերպությունների միջոցով:

Ինչո՞ւ:

Ինչպե՞ս է ստացվում, որ Հայաստանի ներկայացուցիչները կարող են Ադրբեջան մեկնել առեւտրային, տնտեսական եւ այլ հարցեր քննարկելու նպատակով, բայց չեն կարողանում կազմակերպել այց հայ գերիների կյանքի, առողջության եւ իրավական կարգավիճակի հարցերով: Արդյո՞ք մարդկանց ճակատագիրն առեւտրային բանակցություններից առավել կարեւոր չէ:

Ինչո՞ւ մինչ օրս բանտարկյալներին ամենաանհրաժեշտ իրեր փոխանցելու նորմալ մեխանիզմ կազմակերպված չէ: Մի շարք անձինք արդեն ավելի քան մեկ տարի ոչինչ չեն ստանում: Շատերը նորմալ հագուստ չունեն. հնարավորություն չկա ստանալ այն, ինչ իրականում անհրաժեշտ է՝ հաշվի առնելով նրանց տարիքը, առողջական վիճակը եւ պահման կենցաղային պայմանները:

Փոխարենը, եթե օգնություն ընդհանրապես հասնում է, այն կազմակերպվում է ոչ պաշտոնական, ոչ թափանցիկ եղանակով՝ առանց հաշվի առնելու բանտարկյալների իրական կարիքները: Մարդիկ ստանում են ոչ թե այն, ինչ իրենց անհրաժեշտ է, այլ այն, ինչ որոշվել է փոխանցել նրանց ինչ-որ մեկի կողմից. սա օգնություն չէ, այլ ողորմություն:

Այստեղ պահվողների շարքում կան տարեց՝ 70 տարեկանից բարձր մարդիկ, առողջական լուրջ խնդիրներ ունեցող մարդիկ: Եթե ատամ չունեցող մարդուն չորամիրգ են տալիս, դա օգնություն չէ: Դա նվաստացնում է:

Արդյո՞ք այս ամենը հայտնի է վարչապետին:

Ո՞վ է անձամբ պատասխանատու այս գործընթացի կազմակերպման համար: Ինչպիսի՞ն է սահմանված կարգը: Ինչո՞ւ այն չի պահպանվում: Չե՞ք ամաչում:

Ամոթ չէ՞ ստանալ խաղաղության մրցանակ, խաղաղության մասին խոսել եւ ծափահարություններ ընդունել, երբ Հայաստանի քաղաքացիները շարունակում են Բաքվի բանտերում մնալ՝ առանց պատշաճ պաշտպանության, առանց սեփական պետության կողմից համակարգային աջակցության, օգնության ու վերահսկողության:

Հայտարարե՛ք պատասխանատու անձին: Հրապարակե՛ք աշխատանքի մեխանիզմը: Բացատրե՛ք՝ վերջին վեց տարիների ընթացքում ի՞նչ է արվել:

Կամ էլ ազնվորեն խոստովանեք, որ այդպիսի պատասխանատու գոյություն չունի, եւ գերիների՝ իրենց պետությունից օգնություն ակնկալելը անիմաստ է»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՅՆԵՐ՝ ՍՈՉԻՈՒՄ

Ռուսաստանի առողջարանային Սոչի քաղաքում գիշերվա ընթացքում մի քանի պայթյուն է որոտացել: Տեղի բնակիչների փոխանցմամբ՝ քաղաքի երկնքում լսվել են հակաօդային պաշտպանության համակարգերի աշխատանքի ձայներ, իսկ իշխանությունները հայտարարել են անօդաչու թռչող սարքերի հարձակման վտանգի մասին: Baza Telegram ալիքի տվյալներով՝ Սոչիում միացվել են օդային տագնապի ազդանշանները, իսկ քաղաքի օդանավակայանը ժամանակավորապես դադարեցրել է աշխատանքը՝ «Ковер» հատուկ ռեժիմի շրջանակում: Ականատեսները պնդում են, որ հակաօդային պաշտպանության միջոցները շարունակել են աշխատել ամբողջ գիշերվա ընթացքում:

Ռուսական աղբյուրները նշում են, որ սա արդեն չորրորդ ալիքի հարձակումն է Սոչիի ուղղությամբ: Ավելի վաղ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ մայիսի 7-ի գիշերը երկրի 21 շրջանների երկնքում խոցվել է ավելի քան 300 ուկրաինական անօդաչու սարք: Հարվածները տեղի են ունեցել այն ֆոնին, երբ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել էր մայիսի 8-9-ի «լռության ռեժիմի» մասին:

ՎԹԱՐԱՅԻՆ ՎԱՅՐԷՋՔ

Շվեյցարական SWISS ավիաընկերության ուղեւորատար ինքնաթիռը արտակարգ վայրէջք է կատարել Ղազախստանի Ալմաթի քաղաքում այն բանից հետո, երբ թռիչքի ընթացքում օդաչուներից մեկի ինքնազգացողությունը կտրուկ վատացել է: Դեպքը տեղի է ունեցել մայիսի 6-ին՝ Սեուլից դեպի Ցյուրիխ իրականացվող չվերթի ժամանակ:

Aviation Today-ի փոխանցմամբ՝ Airbus A350 ինքնաթիռում գտնվել է 227 ուղեւոր եւ անձնակազմի 14 անդամ: Թռիչքի ընթացքում, երբ օդանավը գտնվել է Ղազախստանի օդային տարածքում, երկրորդ օդաչուն վատ է զգացել իրեն, ինչից հետո որոշում է կայացվել անհապաղ վայրէջք կատարել Ալմաթիում: Մինչ վայրէջքը երեք բժիշկ օգնություն են ցուցաբերել օդաչուին, իսկ օդանավակայանում նրան սպասել են շտապօգնության խմբերը, որոնք տեղափոխել են հիվանդանոց:

Տեղական լրատվամիջոցների տեղեկություններով՝ օդաչուի մոտ հնարավոր է եղել որովայնային հիվանդություն, սակայն SWISS ավիաընկերությունը պաշտոնապես չի հաստատել այդ տվյալը: Արտակարգ վայրէջքից հետո ուղեւորներն ու անձնակազմը գիշերել են Ալմաթիի հյուրանոցներում: Ավիաընկերությունը հայտարարել է, որ իր աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը շարունակում են մնալ գլխավոր առաջնահերթությունը:

ՀԱՐՁԱԿՈՒՄ

ՄԵԿ ԱՆՁ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Հարձակում՝ Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարի աշխատակիցների վրա. նրանցից մեկը ծեծի է ենթարկվել, գլխին հասցված հարվածի հետեւանքով վնասվածք է ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց: Այս մասին գրել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի մամուլի խոսնակ Արյոմ Կարապետյանը:

«Այս միջադեպին նախորդել է աշխատակիցների այցը վարչական շրջանի այն հատված, որտեղ օրենքի խախտումով տեղադրված է եղել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քարոզչական պաստառը, որը գերազանցել է թույլատրելի 5 քմ ծավալը:

Այն ապամոնտաժելու ընթացքում, հավանաբար ինչ-որ մեկի «ահազանգով» շտապ գործողության հասցե են հասնում քարոզչական պաստառի անխախտելիության «խրոխտ» պաշտպանները եւ որոշում են հարցը լուծել «հին ու բարի» մեթոդներով. վիրավորում են եւ ծեծի ենթարկում:

Քաղաքային իշխանությունը հիշեցնում է՝ օրենքի ցանկացած խախտում արձանագրվում է, անհապաղ արձագանք է ստանում եւ որեւէ մեկը չի կարող բացառություն լինել ու ցանկացած նման դրսեւորում արժանանալու է Երեւանի քաղաքապետարանի ամենակոշտ արձագանքին, իսկ իրավապահներն արդեն պարզում են միջադեպի հանգամանքները, եւ ՆԳՆ մեր գործընկերներն ավելի ուշ հավելյալ մանրամասներ կհրապարակեն»,-գրել է Կարապետյանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊԵԼ Է

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հանդիպել է Միջազգային քրեական դատարանի նախագահ, դատավոր Տոմոկո Ականեին, ով Հայաստան է ժամանել «Երեւանյան երկխոսություն» միջազգային երրորդ համաժողովին մասնակցելու նպատակով: Նախարարը ողջունել է Դատարանի նախագահի այցը եւ ընդգծել, որ այն նշանակալի իրադարձություն է՝ հաշվի առնելով, որ սա առաջին դեպքն է, երբ Հայաստանը հյուրընկալում է Միջազգային քրեական դատարանի նախագահին:

Սրբուհի Գալյանը շնորհակալություն է հայտնել Հռոմի կանոնադրության վավերացումից հետո ՀՀ օրենսդրության համապատասխանեցման եւ մասնագետների կարողությունների զարգացման գործընթացում Դատարանի ցուցաբերած փորձագիտական աջակցության համար՝ ներկայացնելով այս ժամանակահատվածում կատարված աշխատանքները: Կարեւորվել է հատկապես Դատարանի հետ գործնական համագործակցության ապահովման կառուցակարգերի ներդրմանն ուղղված օրենսդրական փաթեթի ներդնումը:

Տոմոկո Ականեն բարձր է գնահատել Հայաստանի պատրաստակամությունը՝ արագ եւ արդյունավետ կերպով ապահովելու Հռոմի կանոնադրության գործնական կիրառումը:

Կողմերը քննարկել են Հռոմի կանոնադրությունից բխող պարտավորությունների իրականացման, ինչպես նաեւ համագործակցության ընդլայնման հնարավորությունների հետ կապված հարցեր:

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

Ապրիլի 19-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 14:10-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կապանի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «պոլիտրավմա» ախտորոշմամբ «Կապանի» բժշկական կենտրոն է տեղափոխվել անչափահաս տղա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Կապանի բաժնի օպերատիվ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ ստացված տեղեկությունը հավաստի է, իսկ վիրավորը Սյունիքի մարզի բնակիչ 11-ամյա Ա.Ս.-ն է, ում առողջական վիճակը բժիշկների կողմից գնահատվել է ծանր:

Գ. Շամշյանի տեղեկություններով ոստիկանները պարզել են, որ ժամը 12:00-ի սահմաններում Սյունիքի մարզի բնակիչ 15-ամյա Հ. Ս.-ն Սրաշեն բնակավայրում տնամերձ այգում բենզինային հող փխրեցնող ձեռքի մեխանիզմով փխրեցման աշխատանքներ կատարելիս եղբորը՝ Ա. Ս.-ին պատճառել է մարմնական վնասվածք:

Դեպքի փաստով ոստիկանության Կապանի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն:

ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐ

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների հետեւողականորեն անցկացվող բացատրական աշխատանքի շնորհիվ շարունակվում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնումները:

Ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնելու հերթական դեպքերն են գրանցվել Համայնքային ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում: Ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողել Պառավաքար գյուղի հարակից տարածքում գտնվող աղբյուրի մոտ: Համայնքային ոստիկանները նշված վայրում հայտնաբերել են «ՏՕՋ» տեսակի մարտական ակոսափող հրազեն, ինքնաձիգի ու գնդացրի 96 փամփուշտ եւ վառոդային լիցք:

Բացատրական աշխատանքի արդյունքում բաժին է ներկայացել Արծվաբերդ գյուղի մի բնակիչ եւ կամավոր հանձնել է «Կարաբին» տեսակի ակոսափող հրազեն: Հայտնել է, որ այն պատկանել է հանգուցյալ պապին: Տավուշի բաժին ներկայացած Վերին Ծաղկավան գյուղի բնակիչն էլ կամավոր հանձնել է որսորդական ողորկափող հրացան եւ փամփուշտներ՝ հայտնելով, որ դրանք պատկանել են հանգուցյալ պապին:

ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է քրեական պատասխանատվությունից խուսափելու համար կամավոր հանձնել ապօրինի պահվող զենք-զինամթերքը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Երեւանի Պուշկինի փողոցում բնակվող 51-ամյա մի տղամարդ իրացնելու նպատակով բնակարանում պահում է թմրանյութ:

Տեղեկությունը ստուգվեց, հիմնավորվեց, ու ապրիլի 27-ին Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Նույն օրը զննություն կատարվեց 51-ամյա տղամարդու բնակության վայրում. հայտնաբերվեցին էլեկտրական կշեռք, զիպ փականով բազմաթիվ տոպրակներ եւ վեց փաթեթ՝ լցված ընդհանուր ավելի քան ութ հարյուր գրամ դեղնականաչավուն զանգվածով:

Ըստ տանտիրոջ՝ հայտնաբերվածը մարիխուանա է, այն ձեռք է բերել Տելեգրամյան հարթակի տարբեր օգտատերերից՝ իրացնելու նպատակով:

Իրացնելու նպատակով թմրամիջոց պահելուն վերաբերող մի տեղեկություն էլ Էրեբունու համայնքային ոստիկանները ստուգել ու հիմնավորել էին նախորդ օրը՝ ապրիլի 26-ին:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում զննություն էր կատարվել Սարի թաղում բնակվող օտարերկյա քաղաքացի 28-ամյա տղամարդու տանը: Այս դեպքում էլ հայտնաբերվել են էլեկտրական կշեռք ու տոպրակներ, մեկ փաթեթ՝ լցված 93 գրամ քաշով դեղնականաչավուն զանգվածով եւ փայլաթիթեղի ութ փաթեթ՝ ընդհանուր մոտ ութ գրամ նույն զանգվածներով:

Օտարերկրացին հայտնել է, որ փաթեթներով մարիխուանան պատկանում է իրեն:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Վեդիում անչափահաս քույրերի հետ կապված գործով 2 անձ ձերբակալվել է: Այդ մասին ԶԼՄ-ներին հայտնում են Քննչական կոմիտեից:

Վեդիում անչափահաս քույրերի հետ կապված գործով ձերբակալվել են Ա.Ե.-ն եւ Դ.Ա.-ն: Ավելի վաղ Գլխավոր դատախազությունից հայտնել էին, որ քրեական հետապնդում է հարուցվել Ա.Ե.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (խոցելի վիճակում գտնվող անչափահասի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը) եւ Դ.Ա.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (3 դրվագ):

Գործում ներգրավված է 3 անձ, տուժողները 2 քույրեր են՝ 15 եւ 17 տարեկան: 65-ամյա Դավիթ Այնազյանն անցնում է 2 երեխաների գործով, 58-ամյա Արթուր Երեմյանը՝ 1 երեխայի:

Հիշեցնենք, որ ըստ ՔԿ հաղորդագրության 2026 թվականի փետրվարի 12-ին անչափահաս քույրերի հայրը ՆԳՆ ոստիկանության Վեդիի բաժին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ փետրվարի 8-ին Վ. Ե.-ն, օգտվելով իր դստեր անօգնական վիճակից (տառապում է մտավոր հետամնացություն ախտորոշմամբ), կատարել է անառակաբարո արարք:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ մայիսի 5-ից 6-ը բացահայտվել է թմրանյութի իրացման 3 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԿԱՑՎՈՒՄ

Երեւան քաղաքում՝ հակակոռուպցիոն դատարանում, կայանում էին Բերդ համայնքի սահմանամերձ Վերին Կարմիրաղբյուր բնակավայրի նախկինվարչական ղեկավար, ներկայումս Բերդի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Կամո Չոբանյանի գործով դատական նիստերը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային ստորաբաժանում ուղարկված Բերդ համայնքում հաշվառված 20-ից 51 տարեկան զինապարտների անվանացուցակում իր որդու՝ Մանվել Չոբանյանի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու պայմաններում, վերջինիս անձնական տվյալների դիմաց կատարել է ակնհայտ կեղծ «ՌԴ» գրառումը՝ փաստաթուղթն այնուհետեւ ուղարկելով Բերդի համայնքապետարան, որտեղ հիշյալ անվանացուցակը համայնքապետի կողմից վավերացվելուց հետո, ուղարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային ստորաբաժանում՝ այսպիսով դրվելով պաշտոնական շրջանառության մեջ: Այդ արարքի համար Կ. Չոբանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով («Պաշտոնական կեղծիքը»):

Հակակոռուպցիոն դատարանում այդ գործով դատավարությունում նախագահում է դատավոր Վահե Դոլմազյանը, մեղադրանքը պաշտպանում է ավագ դատախազ Աննա Հակոբյանը: Կամո Չոբանյանի շահերը պաշտպանում է փաստաբան Արթուր Մելիքբեկյանը: Կ. Չոբանյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում, դատարանում նրա պաշտպանը չի ընդունել մեղադրող կողմի հետ համաձայնության գալու, համագործակցության, արագացված դատաքննության վերաբերյալ դատավորի առաջարկը: Կամո Չոբանյանի որդի Մանվելն Արցախում տեղի ունեցած 44-օրյա պատերազմին մասնակցել է, վիրավորվել, նա վարժական հավաքներից խուսափելու մտադրություն երբեւէ չի ունեցել եւ չունի: Կամո Չոբանյանը պնդում է, որ ինքն էլ այդ առնչությամբ կեղծ նշում չի կատարել:

Սույն քրեական գործով դատավարությունը հակակոռուպցիոն դատարանում սկսվել է 2024թ. հոկտեմբերի 7-ին: 2026թ. փետրվարի 9-ի նիստում դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333 հոդվածը, որոշել է քրեական գործով նշանակել փորձաքննություն: Դրա եզրակացությունը դատարանը դեռ չի ստացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

Ո՞Վ Է ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆԸ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական ուժերը մեկը մյուսի հետեւից բացում են իրենց ցուցակները, իսկ հանրության ուշադրության կենտրոնում արդեն ոչ միայն անուններն են, այլեւ այդ անունների կենսագրությունն ու հայտարարագրած կարողությունը:

Այս անգամ ուշադրության կենտրոնում ընտրություններին 12 համարի ներքո մասնակցող Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության առաջնորդ Լեւոն Շիրինյանն է:

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, երկարամյա դասախոս ու գիտաշխատող Շիրինյանը գլխավորում է կուսակցության ընտրացուցակը, սակայն նրա ներկայացրած գույքի եւ եկամուտների հայտարարագիրը ցույց է տալիս բավական համեստ պատկեր:

2024 թվականի հայտարարագրի համաձայն՝ տարվա սկզբում Շիրինյանն ունեցել է ընդամենը մեկ անշարժ գույք՝ բնակարան Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում: Բնակարանը ձեռք է բերվել դեռեւս 2005 թվականին եւ համատեղ սեփականություն է: Տրանսպորտային միջոց նա չի հայտարարագրել:

Ավելի խոսուն են դրամական միջոցները. բանկային հաշիվներին՝ ընդամենը 272 հազար դրամ, կանխիկ՝ 70 հազար դրամ:

Մինչդեռ հաշվետու տարվա ընթացքում նրա ընդհանուր եկամուտը կազմել է 6 միլիոն 378 հազար 651 դրամ: Այդ գումարից 1 միլիոն 244 հազար 31 դրամը ստացվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, իսկ 5 միլիոն 134 հազար 620 դրամը՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտից:

Այսօր Շիրինյանը ղեկավարում է մանկավարժականի հասարակագիտության ամբիոնը, սակայն նրա քաղաքական կենսագրությունն էլ պակաս ուշագրավ չէ: Աշխատանքային ուղին սկսել է դեռ 1976 թվականին՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Հետագայում աշխատել է նաեւ ճարտարապետաշինարարական ինստիտուտում, ղեկավարել գիտահետազոտական խումբ, պաշտոն զբաղեցրել նախագահի աշխատակազմում, դասավանդել է նաեւ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հոգեւոր ճեմարանում:

2007 թվականին նրան շնորհվել է քաղաքական գիտությունների դոկտորի աստիճան՝ ժամանակակից գեոպոլիտիկական տեսությունների եւ Հայաստանի երկրառազմավարական առաջնահերթությունների մասին ատենախոսության համար:

Սակայն քաղաքական ընտրական փորձը Շիրինյանի համար նոր չէ: 2021 թվականին նա մասնակցում էր խորհրդարանական ընտրություններին Հանուն հանրապետության կուսակցության եւ Քրիստոնեա-դեմոկրատական վերածնունդ կուսակցության կազմած դաշինքով, որի առաջնորդը Արման Բաբաջանյանն էր: Այդ դաշինքը, սակայն, ստացավ ընդամենը 1.50 տոկոս եւ մնաց ԱԺ-ից դուրս:

Այժմ՝ 2026-ի ընտրություններին ընդառաջ, նախկին գործընկերները գնում են առանձին ճանապարհներով: Իսկ գլխավոր հարցը մնում է նույնը՝ արդյո՞ք երկար կենսագրությունն ու ակադեմիական փորձը կկարողանան վերածվել քաղաքական քվեի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ Է ՀԱՅՏՆԵԼ

Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանն ինքնաբացարկ է հայտնել.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Տեղյակ եք, որ ընդգրկված եմ 2026թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային Ժողովի հերթական ընտրությունների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում: Տեղյակ եք նաեւ, որ Երեւանի քաղաքապետ պարոն Տիգրան Ավինյանը նույնպես պատգամավորի թեկնածու է՝ ընդգրկված ՔՊ ընտրական ցուցակում:

Ընտրական օրենսգիրքը, սակայն, սահմանում է, որ հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուները (բացառությամբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների եւ կառավարության անդամների) նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչեւ քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Սա նշանակում է, որ թե՛ ես, թե՛ պարոն Ավինյանը, ընտրական ցուցակում մնալու դեպքում, օրենքի ուժով ժամանակավորապես ազատվելու ենք մեր պարտականությունների կատարումից մայիսի 8-ից սկսած:

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն՝ քաղաքապետի առաջին տեղակալն է փոխարինում քաղաքապետին վերջինիս բացակայության ժամանակ: Ինչը նշանակում է, որ գործող օրենսդրական կարգավորումները թույլ չեն տալիս քաղաքապետի մյուս տեղակալներին փոխարինել քաղաքապետին:

Հաշվի առնելով վերը գրված հանգամանքը, առաջնորդվելով Երեւան քաղաքի լավագույն շահով եւ քաղաքի կառավարման ճգնաժամ չհարուցելու հրամայականով՝ որոշել եմ ինքնաբացարկ հայտնել:

Ուժերիս ներածին չափով, բնականաբար, աջակցելու եմ կուսակցությանս գալիք ընտրություններում ջախջախիչ հաղթանակ տանելու համար:

Տե՛ր կանգնիր խաղաղությանը, սիրելի՛ երեւանցի»:

ԿԵՂԾ ՆԱՄԱԿՆԵՐ

Հանրակրթական դպրոցների պաշտոնական էլեկտրոնային հասցեներին ԿԳՄՍ նախարարության հետ առնչություն չունեցող էլեկտրոնային հասցեից տարածվում է կեղծ հաղորդագրություն նախարարության հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանի անունից: ԿԳՄՍ նախարարությունը պաշտոնապես հայտնում է, որ նշված նամակը ապատեղեկատվություն է եւ որեւէ առնչություն չունի նախարարության հետ:

«Հանրակրթական ուսումնական հաստատությունների հարգելի՛ տնօրեններ, խնդրում ենք տվյալ նամակը չդիտարկել որպես նախարարության պաշտոնական հաղորդագրություն եւ առաջնորդվել բացառապես նախարարության պաշտոնական աղբյուրներով ստացվող եւպաշտոնական հարթակներում հրապարակվող տեղեկատվությամբ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախարարությունը հետեւողական է լինելու յուրաքանչյուր ապատեղեկատվության եւ մանիպուլյատիվ գործողության բացահայտման հարցում»:

● *Մայիսի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է 5 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:*

ԼՈՒՐԵՐ

ՆՎԱԶԵՑՐԵԼ Է

Արդշինբանկը շարունակում է աջակցել Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը՝ բարելավելով ֆինանսավորման պայմանները եւ ընդլայնելով բիզնեսի համար հասանելի հնարավորությունները:

Բանկը վերանայել է ՓՄՁ հաճախորդներին տրամադրված վարկերի պայմանները: Կարեւորելով երկարատեւ համագործակցությունը եւ նպատակ ունենալով թեթեւացնել հավատարիմ հաճախորդների վարկային բեռը՝գործող պարտավորությունների տոկոսադրույքները նվազեցվել են 1 տոկոսային կետով: Փոփոխությունը ուժի մեջ է մտել 2026 թվականի մայիսի 5-ից:

Այս նախաձեռնությունը միտված է նվազեցնելու բիզնեսների ֆինանսական բեռը, խթանելու ներդրումային ակտիվությունը եւ ապահովելու առավել մրցունակ պայմաններ տեղի ձեռնարկատերերի համար:

Արդշինբանկը շարունակում է նաեւ զարգացնել ՓՄՁ հաճախորդների սպասարկման ենթակառուցվածքները: Բիզնեսների սպասարկումն ավելի ճկուն դարձնելու նպատակով վերջերս գործարկվել է առցանց վարկավորման հնարավորություն www.sme.ardshinbank.am հարթակում, ինչպես նաեւ բացվել է փոքր եւ միջին բիզնեսի համար մասնագիտացված «Արդշինբանկ Բիզնես» մասնաճյուղը, որը գտնվում է Երեւանում՝ Տիգրան Մեծի 16/12 հասցեում:

Բանկի կողմից առաջարկվող ՓՄՁ ծառայությունների ամբողջական փաթեթը ներառում է վարկային, հաշվարկային եւ խորհրդատվական լուծումներ՝ հարմարեցված տարբեր ոլորտներում գործող բիզնեսների կարիքներին:

ՓՄՁ գործընկերությանը եւ ցանկացած այլ ֆինանսական ծառայություններին վերաբերող հարցերի դեպքում կարող եք զանգահարել բանկի շուրջօրյա կոմունիկացիոն կենտրոն 012 22 22 22 հեռախոսահամարով կամ այցելել Արդշինբանկի մասնաճյուղերից մեկը, ինչպես նաեւ օգտվել բանկի պաշտոնական կայքից՝www.ardshinbank.am:

Արդշինբանկը շարունակելու է իր գործունեությամբ նպաստել գործարար միջավայրի զարգացմանը՝ լինելով վստահելի գործընկեր բիզնեսի համար:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»

Ս.թ. մայիսի 15-ից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դադարեցնելու է ՀՀ, 0010, ք. Երեւան, Նալբանդյան 48/1 հասցեում գործող «ՍԱԽԱՐՈՎ» մասնաճյուղի գործունեությունը: «ՍԱԽԱՐՈՎ» մասնաճյուղի հաճախորդները կարող են շարունակել սպասարկվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» մասնաճյուղում (հասցե՝ ՀՀ, 0010, ք.Երեւան, Արամի փողոց թիվ 3 եւ 5 շենք), ինչպես նաեւ Բանկի ցանկացած այլ մասնաճյուղում:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրեթե բոլոր բանկային գործարքները հնարավոր է կատարել AEB Mobile հավելվածով եւ/կամ վճարային տերմինալներով:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ FTSE 100-ՈՒՄ

Lion Finance Group-ը (LFG) ազդարարեց իր ընդգրկումը FTSE 100 ինդեքսում՝ շուկայի փակումից հետո հնչեցնելով Լոնդոնի ֆոնդային բորսայի զանգը:

Ամերիաբանկը որպես LFG խմբի մաս, 2026թ. մարտին ներառվել է աշխարհի առաջատար բորսաներից մեկի FTSE 100 ինդեքսում՝ դառնալով առաջին հայկական ընկերությունը, որն ընդգրկվում է Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված 100 խոշորագույն ընկերությունների շարքում:

Լոնդոնի ֆոնդային բորսայի զանգի հնչեցմանարարողությունը խորհրդանշական ավանդույթ է, որին մասնակցում են ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչները, ներդրողները եւ հիմնական շահառուները:

Այս արարողությանը մասնակցեցին Lion Finance Group-ի, Ամերիաբանկի, Bank of Georgia-ի ղեկավար կազմը, ինչպես նաեւ Վրաստանի եւ Հայաստանի կառավարությունների անդամներ, այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը եւ այլ հյուրեր:

LFG-ի ընդգրկումը FTSE 100 ինդեքսում վկայում է խմբի երկարաժամկետ ռազմավարության եւ կայուն աճի նկատմամբ միջազգային ներդրողների մեծ վստահության մասին:

Այս կարեւոր իրադարձությունը Խմբի եւ դրա անդամների համար նշանավորում է զարգացման նոր փուլ, որի հիմքում երկարաժամկետ ռազմավարական տեսլականն է եւ հաճախորդների համար արժեք ստեղծելու հանձնառությունը:

2006 թվականից Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված լինելով՝ LFG ֆինանսական խումբն ընդգրկվում է FTSE 100 ինդեքսում Ամերիաբանկի՝ խմբին միանալուց երկու տարի անց: Սա վկայում է Ամերիաբանկի՝ խմբում ընդգրկվելու ռազմավարական կարեւորության եւ խմբի ընդհանուր զարգացման համարբանկի նշանակալի դերի մասին:

Նշենք, որ այցի ընթացքում Ամերիաբանկի ու Bank of Georgia-ի ներկայացուցիչները հյուրընկալվել են նաեւ Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը, հանդիպել են արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ Վարուժան Ներսեսյանի հետ:

Lion Finance Group-ը Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված բանկային խումբ է, որը միավորում է տարածաշրջանի առաջատար, հաճախորդակենտրոն, թվային հնարավորություններով հագեցած ունիվերսալ բանկերը եւ գործում է իր հիմնական անդամների՝ Վրաստանում Bank of Georgia-ի եւ Հայաստանում՝ Ամերիաբանկի միջոցով:

ԼՈՒՐԵՐ

100 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

Ակբա բանկը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ նոր համագործակցությամբ 100 միլիոն եվրո կուղղի Հայաստանում գործող բիզնեսների զարգացմանը, ընդ որում՝ ֆինանսավորման 50 միլիոն եվրոյի ռիսկը կկրի ՎԶԵԲ-ը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության աջակցությամբ՝ EFSD+ ծրագրի շրջանակում:

Ծրագրի հիմնական առավելությունները.

- Ֆինանսավորման հեշտ հասանելիություն. տրամադրվող միջոցներով ՓՄՁ-ները հնարավորություն կստանան համալրել շրջանառու միջոցներն ու ընդլայնել բիզնեսը:
- ԵՄ աջակցություն. ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության (EFSD+ ծրագիր) ֆինանսական երաշխիքների ներքո:

Նոր համաձայնագիրը Լոնդոնում ստորագրել են Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը եւՎԶԵԲ-ի ֆինանսական հաստատությունների գծով գործադիր տնօրեն Ֆրանսիս Մալիժը:

«Ակբա բանկը եւ ՎԶԵԲ-ը համագործակցության երկար տարիների փորձ ունեն, եւ փոխադարձ վստահությամբ զարգացնում ենք մեր գործընկերությունը: Լոնդոնում ստորագրված համաձայնագիրը նոր հորիզոններ է բացում հատկապես փոքր եւ միջին բիզնեսի համար: Ուրախ եմ, որ Ակբա բանկը Հայաստանում շարունակում է նպաստել ֆինանսավորման լուծումների զարգացմանը, որոնք ունեն իրական եւտեսանելի ազդեցություն մեր տնտեսության վրա»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:



«Ուրախ ենք Ակբա բանկի հետ ստորագրել երաշխիքային այս նոր համաձայնագիրը՝ մեր հիմնական գործընկեր Եվրոպական միության աջակցությամբ: Մենք հավատարիմ ենք մնում մասնավոր բիզնեսի աճի եւ կայունության խթանմանը՝ բարելավելով փոքր եւ միջին ձեռնարկությունների հասանելիությունը ֆինանսներին, ինչը Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր շարժիչ ուժն է: Նորարարական ֆինանսական գործիքների միջոցով մենք նպաստում ենք երկրի տնտեսական դիմակայունությանը եւզարգացմանը: Ընկերությունների մրցունակության բարձրացումը եւ ֆինանսական հատվածի միջոցով ռիսկերի բաշխման գործիքների կիրառումը Հայաստանում ՎԶԵԲ-ի հիմնական առաջնահերթություններից են»,- նշել է ՎԶԵԲ-ի ֆինանսական հաստատությունների գծով գործադիր տնօրեն Ֆրանսիս Մալիժը:

Ակբա բանկը Հայաստանի տնտեսության առաջատար ֆինանսավորողներից մեկն է եւ երկրի գյուղատնտեսական ոլորտի ֆինանսավորման առաջատարներից մեկը: Բանկը անընդհատ ընդլայնում եւ զարգացնում է ֆինանսական ծառայությունների քանակն ու որակը՝ նպաստելով Հայաստանի տնտեսական կայունությանը եւ զարգացմանը: Ակբա բանկը Հայաստանի առաջին լիզինգային ընկերության՝Ակբա Լիզինգի հիմնադիրն ու 100% բաժնետերն է, ինչպես նաեւ Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ Ամունդիի հետ համատեղ Հայաստանում հիմնադրել է Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ընկերությունը: Ակբա բանկը գործում է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 66 մասնաճյուղ եւ ավելի քան 5000 բաժնետեր:

ՎԶԵԲ-ը Հայաստանի խոշորագույն ինստիտուցիոնալ ներդրողներից է, որն իրականացրել է շուրջ 3 միլիարդ եվրոյի ներդրում երկրի 243 ծրագրերում, ընդ որում՝ այդ ներդրումների մեծ մասն ուղղվել է մասնավոր հատվածին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Միասնության թեւեր» կուսակցությունը հրապարակել է առաջիկա օրերի նախընտրական քարոզարշավի այցերի ժամանակացույցը:

Նախընտրական այցերի ժամանակացույց.

08 մայիսի 2026թ.

11:00 - Քարոզարշավի մեկնարկ՝ Գոշավանք

12:30 - Իջեւան եւ հարակից գյուղեր՝ Աչաջուր, Ազատամուտ

09 մայիսի 2026թ.

11:00 - Հաղթանակ զբոսայգի

12:30 - Երեւան, Նոր Նորք վարչական շրջան

10 մայիսի 2026թ.

11:00 - Վանաձոր եւ հարակից գյուղեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

FINTECH360 Գ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ FINTECH360 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Յունիբանկի աջակցությամբ Երեւանում անցկացվեց FINTECH360 միջազգային համաժողովը, որը համախմբեց շուրջ 500 մասնակից ավելի քան 30 երկրներից՝ ներառյալ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Շվեյցարիան, Կիպրոսը, Լատվիան, Լյուքսեմբուրգը, Ռումինիան, ԱՄԷ-ն, Հնդկաստանը, Ռուսաստանը, Ելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Մոլդովան, Ուզբեկստանը, Վրաստանը եւ այլն:

Համաժողովն անցկացվեց FINTECH360-ի գլխավոր գործընկեր՝ Յունիբանկի աջակցությամբ:

FINTECH360-ը միավորեց բանկային ոլորտի, վճարային համակարգերի, խոշոր SS ընկերությունների ղեկավարներին եւ ստարտափներին՝ քննարկելու ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման հիմնական միտումներն ու մարտահրավերները:

Բացման խոսքով հանդես եկան Յունիբանկի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը, Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը, MCC ICF վկայագրված քոուչ Սաբրինա Մոմինը եւ FinTech Armenia-ի հիմնադիր Ստեֆան Լուկասը:

FINTECH360 համաժողովը եւս մեկ անգամ հաստատեց իր կարեւոր դերը՝ որպես միջազգային հարթակ ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտում փորձի փոխանակման եւ երկխոսության համար: Համաժողովի օրակարգի հիմնական թեմաներն էին՝

- հաճախորդի փորձը ֆինտեխում եւ տեխնոլոգիաների դերը որակյալ պրոդուկտ ստեղծելու գործում,
- ֆինանսական ոլորտի թվայնացումը՝ բաց բանկինգ, բաց ֆինանսներ, կենսաչափական նույնականացում,
- AI-գործակալների եւ բազմագործակալ համակարգերի կիրառումը ֆինանսական գործընթացների ավտոմատացման մեջ,
- վճարային ոլորտի հիմնական միտումները, էլեկտրոնային առեւտրի զարգացումը,
- կրիպտոարժույթների եւ բլոկչեյնի ոլորտում անվտանգությունն ու AML կարգավորումը:

Այսօր ֆինանսական ոլորտը գտնվում է ոչ միայն թվայնացման փուլում, այլեւ խորը կառուցվածքային վերափոխման գործընթացում: Փոխվում են ոչ միայն տեխնոլոգիաները, այլեւ ֆինանսների ամբողջ տրամաբանությունը», - նշեց Յունիբանկի Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը: Նրա խոսքով՝ տեխնոլոգիաներն արդեն սկսում են որոշել մրցունակությունը: Արհեստական բանականությունն ու ավտոմատացումը այլեւս միայն արդյունավետության հարց չեն, այլ բանկերի, վճարային համակարգերի եւ ամբողջ ֆինանսական ենթակառուցվածքի երկարաժամկետ զարգացման կարեւորագույն գործոններ:

Նշվեց նաեւ, որ Յունիբանկը առաջինն էր Հայաստանում, որ գործարկեց արհեստական բանականության վրա հիմնված վարկային սքորինգ անգրավ վարկերի համար, ինչը թույլ տվեց ավելի արագ եւ արդյունավետ մշակել մեծ թվով վարկային հայտեր: Մեսրոպ Հակոբյանն ընդգծեց, որ FINTECH360-ի նման հարթակները ստեղծում են շուկայի մասնակիցների միջեւ երկխոսության միջավայր, ինչպես նաեւ հնարավորություն են տալիս զարգացնել գործընկերությունը, փոխանակվել փորձով եւ բացահայտել տարածաշրջանային աճի նոր ուղղություններ:

Հագեցած գործարար ծրագրից հետո FINTECH360-ի մասնակիցները մեկնեցին Գառնի եւ Գեղարդ, ինչպես նաեւ գինեգործարան, որտեղ կազմակերպվել էր հայկական գինիների համտես:

5 ՊԱՀԱՆՋ

Ժոզե Մոուրինյուն Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի հետ քննարկել է «արքայական ակումբի» գլխավոր մարզչի պաշտոն վերադառնալու հավանականությունը: Բանակցությունների ընթացքում պորտուգալացի մասնագետն առաջադրել է 5 պայման. այս մասին հայտնում է իսպանական Sport պարբերականը:

Պայմանագիր երկու մրցաշրջանով. Մոուրինյուն ցանկանում է համաձայնագիր կնքել մինչեւ 2028 թվականի հունիսի վերջ:

Ակումբի մամուլի քարտուղարի նշանակում. Մոուրինյուն ցանկանում է հանդես գալ բացառապես որպես մարզիչ եւ ոչ թե որպես ակումբի պաշտոնական խոսնակ: «Յուրահատուկը» չի ցանկանում, որ իր՝ ոչ ֆուտբոլային հայտարարությունների պատճառով կոնֆլիկտները կրկնվեն:

Լիակատար մարզական անկախություն. Պորտուգալացին դեմ է, որ ղեկավարությունից որեւէ մեկն ազդեցություն ունենա մարզական որոշումների վրա: Պերեսը ստիպված կլինի համաձայնել զիջել իր դիրքերը: Մոուրինյուն պահանջում է, որ ինքը ղեկավարի թիմը, իսկ Պերեսը՝ ակումբը:

Ֆիզպատրաստության գծով մարզիչ Անտոնիո Պինտուսի հեռացումը. Մոուրինյուն չի ցանկանում իր շտաբում տեսնել «Պերեսի լրտեսներին»: Նա պահանջում է ուղիղ կապ նախագահի հետ՝ առանց միջնորդների: Այս պահանջը կարող է ամենախնդրահարույցը լինել, քանի որ Պերեսը մեծապես վստահում է Պինտուսին:

Բժշկական շտաբի վերահսկողություն. Մարզիչը պահանջում է, որ ֆուտբոլիստները ցանկության դեպքում կարողանան խորհրդակցել այլ բժիշկների հետ՝ այլընտրանքային կարծիք լսելու նպատակով: Բացի այդ, Ժոզեն ցանկանում է անձամբ մասնակցել բժիշկների հետ խաղացողների առողջական վիճակի քննարկումներին:

Հիշեցնենք, որ Ժոզե Մոուրինյուն Մադրիդի «Ռեալը» գլխավորել է 2010-ից 2013 թվականներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՌԱԿՏՈՒՄ «ՌԵԱԼ»-Ո՞ՒՄ

Մադրիդի «Ռեալ»-ի հանդերձարանում խիստ անհանգիստ մթնոլորտ է: Վերջին օրերին իսպանական մամուլը բացահայտել է ֆուտբոլիստների միջեւ տեղի ունեցած միանգամից երկու լուրջ կոնֆլիկտ: Չորեքշաբթի կայացած մարզման ժամանակ բանը գրեթե հասել է ծեծկռտուքի Օրելյեն Չուամենիի եւ Ֆեդերիկո Վալվերդեի միջեւ:

«Արքայական ակումբն» ակնհայտորեն բարդ շրջան է ապրում, իսկ թիմի ներսում պառակտումն ավելի ու ավելի նկատելի է դառնում: Ինչպես հաղորդում է Marca պարբերականը, կոլեկտիվում ձեւավորվել են խաղացողների առանձին խմբավորումներ, որոնք գրեթե չեն շփվում միմյանց հետ:

Բացի այդ, ծայրահեղ լարված են հարաբերությունները մարզչական շտաբի անդամ Ալվարո Արբելոայի հետ: «Իրավիճակն այնքան է սրվել, որ մոտ վեց ֆուտբոլիստ ընդհանրապես չի խոսում նրա հետ»,- նշվում է իսպանական պարբերականի հոդվածում:

Հատկանշական է, որ այս պայթյունավտանգ եւ լարված իրավիճակում մադրիդյան թիմը պատրաստվում է մրցաշրջանի առանցքային հանդիպումներից մեկին. կիրակի՝ մայիսի 10-ին, «Ռեալ»-ն արտագնա խաղում ուժերը կչափի ոխերիմ թշնամու՝ կատալոնական «Բարսելոնա»-ի հետ:

ԱՆՆԱ ԱՄՐՈՅԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ

Աննա Ամրոյանը դարձել է Եգիպտոսում ընթացող ծանրամարտի երիտասարդական Աշխարհի առաջնությունում հաղթող:

Նա մինչեւ 77 կգ քաշային կարգի պոկում վարժությունում կարողացել է օգտագործել 3 մոտեցումն էլ ու գլխավերեւում պահել է 106 կգ: Հրումում եւս Ամրոյանի բոլոր փորձերը հաջողված են եղել ու նա գրանցել է 134 կգ: Ամրոյանը չեմպիոնի կոչումը նվաճել է երկամարտի 240 կգ արդյունքով:

Օրեր առաջ Ամրոյանը Բաթումիում մասնակցել է մեծահասակների Եվրոպայի առաջնությանն ու պոկումում 0 ստացել: Հրումում նա բարձրացրել է 136 կգ ու Եվրոպայի ռեկորդ սահմանել՝ նվաճելով փոքր ոսկե մեդալ:

● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 16-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Սպարտակ» բալետը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է Մարդու իրավունքների պաշտպանն աջակցում խախտված իրավունքի վերականգնման հարցում:

Անիտա Սարգսյան, 28 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քննարկելով բողոքը եւ տեսնելով մարդու իրավունքների եւ ազատությունների խախտում՝ Պաշտպանն առաջարկում է տվյալ խախտումը կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար անձին վերացնել թույլ տրված խախտումները:

Պաշտպանը նաեւ նշում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները:

Պաշտպանն իրավասու է առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն պաշտոնատար անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, ինչպես նաեւ ձեռնարկել օրենքով նախատեսված այլ գործողություններ:

Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպան

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է նշանակում, որ Հայաստանի Կենտրոնական բանկն անկախ է:

Ռուբեն Դավթյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենտրոնական բանկի անկախությունը կարեւոր ինստիտուցիոնալ նախապայման է գների կայունությունը պահպանելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենտրոնական բանկերի գործառնական անկախությունը նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վստահելիությանը՝ միաժամանակ ուժեղացնելով շուկայի արձագանքը կենտրոնական բանկի ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ուղղակի կապ կենտրոնական բանկի անկախության եւ ցածր գնաճի միջեւ (Cukierman A., Central Bank Strategy, Credibility and Independence, Theory and Evidence, MIT press, 1998):

Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով կենտրոնական բանկի անկախության երեք աստիճան կա.

նպատակի անկախություն
թիրախի սահմանման անկախություն
գործառնական անկախություն

Նպատակի անկախությունը (նպատակի սահմանումը) անկախության ամենաբարձր աստիճանն է, որը շնորհվում է, օրինակ, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգին: Սակայն, հիմնվելով տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների վրա, Դաշնային պահուստային համակարգը կարող է փոխել նպատակը: Հայաստանի դեպքում Կենտրոնական Բանկին չի տրվում անկախության այդպիսի աստիճան. Կենտրոնական Բանկի հիմնական նպատակը սահմանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Կենտրոնական Բանկի մասին օրենքով: Հայաստանում թիրախային ցուցանիշի սահմանման անկախությունը նախատեսված է Բյուջեի մասին օրենքով: Գործառնական անկախությունը ենթադրում է, որ կենտրոնական բանկը կարող է անկախ օգտագործել իր գործիքները՝ վերջնական նպատակին հասնելու համար: Հայաստանի Կենտրոնական Բանկն ունի գործառնական անկախություն, եւ դա շնորհված չէ բոլոր երկրների կենտրոնական բանկերին: Օրինակ՝ Անգլիայի Բանկը, որը մինչեւ 1998 թվականը գործիքների օգտագործման անկախություն չուներ, եւ միջամտելու իրավասություն տրված էր գործադիր իշխանությանը:

ՀՀ Կենտրոնական բանկ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Դավթաշենից Զովունի տանող մոտ 400 մետր ճանապարհին առաջացած փոսերի պատճառով շտապօգնությունը բուժառուին է հասնում 1 ժամ ուշացումով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 1 + 4 + 8 + 13
	Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 9 + 12
	Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +14 + 17
	Գեղարքունիք	0 + 4 + 8 + 12
	Լոռի	+ 4 + 7 + 12 + 15
	Տավուշ	+ 5 + 8 +13 + 16
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 11
	Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +14 + 18

	Արարատ	+ 8 + 10 +17 + 20
	Արմավիր	+ 9 + 11 +19 + 21
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 9 + 13
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 21
	Սյունիքի լեռներ	+ 1 + 4 + 6 + 9
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 11 + 15
	Սյունիքի հովիտներ	+ 10 + 13 +17 + 21
	Երեւան	+ 8 + 10 + 19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **07.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*